

ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՊԱՅՋԱՐԸ ԹՈՆԴՐԱԿՅԱՆ
ԱՂԱՆԴԻ ԴԵՄ

Գր.Մագիստրոս Պահլավունին (990-1058) 11-րդ դ. ամենանշանավոր քաղաքական-պետական և մշակութային գործիչներից է: Հանրագիտակ մտածողն ու իմաստասերը նաև մեծ ռազմական գործիչ է՝ մագիստրոսի զինվորական աստիճանով:

1051թ. իշխանն արշավում է Թոնդրակ ավանի վրա, կործանում հավատքի «ատրուշանը», փոխում բնակավայրի անունը՝ վերանվանելով այն Սուրբ Գևորգ¹: Հազարից ավելի մարդկանց դարձի է բերում: Ամենավճռական ու արդյունավետ միջոցները թոնդրակյանների դեմ գործադրում է նա²: Պրոֆեսոր Գ.Անանյանը նկատում է, թե աստվածը նդդեմ խոսքը Աստժո օրենքներից դուրս է և իր «սուր ծայրով ուղղված է աղանդներին, որոնք միշտ էլ սպառնացել են առաքելական եկեղեցու միասնությանը, որ այս դեպքում նույնն է, թե ազգային միասնությանը»³: Դրանով էր պայմանավորված և Գր.Մագիստրոսի պայքարը թոնդրակյանների դեմ, ահա ինչու նա ամեն կերպ ջանում էր թե՛ գործնական, թե՛ գաղափարական առումներով խիստ հակահարված հասցնել աղանդին, կործանել նրա կառույցի ամբողջականությունը: Մինչև Պահլավունյաց իշխանի գործունեությունը թոնդրակյան աղանդը գիտակցվել է իբրև գաղափարական մեկ ամբողջություն, և չեն բացահայտվել նրա յուրահատկությունները: Իր Կեթըթում, որը ուղղված է ասորիների կաթողիկոս Հովհան 7-րդին (1001-1058)⁴, Մագիստրոսն առանձնացնում է աղանդի գաղափարական սկզբունքները և հիմնական ուղղությունները. 1.Էպիկուրյաններին հարող մատերիալիստական ուղղություն, 2. Մանիի ուսմունքին հարող թև, 3.Քրիստոնեական հավատքին մոտ և իրենց Արամյան գնդից համարող թև, 4.Արևորդիների թև, ովքեր հարում են Ջրադաշտի ուսմունքին, 5. Խնուսցիներ, կաշեցիներ, թուլայեցիներ՝ համայնքներ ըստ բնակության վայրերի:

Այս առիթով են գրված ոչ միայն Կե, այլև Ը,Ժ,ԿԸ մագիստրոսյան թղթերը:

Պավլիկյանների՝ ասպարեզից հեռանալուց հետո կարճ ժամանակ անց նրանց ուսմունքի հիմքի վրա բարձրացավ և 9-11-րդ դդ. ընթացքում իր գործունեությունը լայնորեն ծավալեց թոնդրակյան աղանդը:⁵ Նրա հիմնադիրն

էր Սմբատ Ջարեհավանցին, որն ըստ Մագիստրոսի իր գործունեությունն սկսեց 9-րդ դարի 40-ական թվականներից՝ Հովհան Օվայեցի (833-855) կաթողիկոսի օրոք՝ 200 տարի հայ հոգևոր կյանքը պահելով խռովահույզ վիճակում⁶:

Մխիթար Ապարանցին նշում է, որ նա փախչում է Կոստանդին-Սիզվանոսի մոտից՝ Մանանադի գավառի Շամարտա բնակավայրից (որի բնակիչներին Մագիստրոսը «շամարտացի շներ» է անվանում): Խնունյաց գավառի Տևերիկ ավանում էր ապրում աղանդավոր Սերգիոսը (ենթադրվում է, որ երկուսն էլ հայագգի անձինք էին), ում մոտ հանգրվանում է հալածված աղանդապետը:

Թոնդրակը դառնում է նրանց գործունեության կենտրոնը: Ավելի ուշ Սմբատին բռնում և մահապատժի է ենթարկում կայսիկների էմիր Աբուլ Վարդը: Ըստ Գր.Նարեկացու նա ասում է, թե ինքը կսպանի վերջինիս, և եթե նա Քրիստոսն է, ինչպես պնդում է, թող կրկին կենդանացնի իրեն⁷:

Ջարեհավանցու գործակցությունը նշանավոր պավլիկյանների հետ պատահական չէր: Այս մերձավորությունից բացի աղանդը ներքին կապեր ուներ նաև մծղնեական և անգամ պարսկական շիա աղանդների հետ (քուռամյանցների շարժում՝ Ջավիդան-Մահիի և Բաբեկի առաջնորդությամբ⁸): Այս շրջանի գրեթե բոլոր մտածողները գրել են թոնդրակյանների մասին՝ հակադրվելով նրանց, իսկ Արիստակես Լաստիվերտցին՝ հիշելով աղանդապետերի և նրանց միացած կին աղանդապետուհիների մասին, եպիսկոպոսական դասից՝ Հակոբոսին, Կունծիկ աբեղային, Անդրեասին, Վռվեռ իշխանին, նրա քույրեր Հրանուշին և Ախնիին, չի ցանկանում շարունակել իր խոսքը. «Բայց նոցա մծղնե գործն անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել⁹», քանզի դա շատերի համար գայթակղության դուռ կարող է բանալ, և նրանք կկրկնեն սրանց կատարածները: Մյուս կողմից, սակայն, աղանդավորները գործում էին այն նույն ձևով, ինչպես իրենց մեծ պայքարն սկսած վաղ շրջանի քրիստոնյաները: Դա բոլոր ճնշվածների զայրույթի արտահայտությունն էր ընդդեմ տիրող դասի, օտար նվաճողների և գաղափարական կաշկանդումների¹⁰: Հերձվածը շատ տարածված էր մեզանում և նշանավոր վարդապետներից ոմանք տարբեր ժամանակներում մեղադրվել են աղանդին հարելու մեջ, և նրանք ստիպված են եղել հրապարակավ անիծել աղանդավորներին ու նրանց սկզբունքները¹¹: Պատճառը թերևս սոցիալական տարբեր խմբերի ներգրավվածությունն էր այնտեղ և նրա զանգվածային բնույթը: Հետևելով հեթանոսական շատ ուղղությունների, արհամարհելով քրիստոնեությունը և հաճախ էլ ցանկանալով փոխել նրա

բարոյականության օրենքները՝ աղանդավոր կանայք առավել սանձարձակ բարքով և մոլեռանդ գործելակերպով են աչքի ընկել: Դեռևս պավլիկյանների օրոք գործել է Շեթի անունով մի պարսկուհի, որն ամուսնացել է Այրարատ նահանգի Պողոս անունով մի հայ մարդու հետ: Ըստ աղբյուրների նա աղանդապետուհի է դարձել տարածված զարհուրելի սովորության գործադրումով: Սովորության համաձայն, երբ անբարո կանայք ունենում էին իրենց առաջնեկը, շրջան էին կազմում և երեխան ձեռքից ձեռք նետում այնքան, մինչև նա մահանում էր: Ում ձեռքերի մեջ մեռներ, նա էլ կարգվում էր աղանդապետուհի¹²: Այսպիսի բաներ տարածված էին նաև թոնդրակյանների մեջ, քանզի «յաւուրս տեառն Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունւոյ, ուսեալ զշար մոլորութիւն յունենէ պարսկական թժշկէ և յաստղաբաշխէ մոգէ, զոր Մըջուսիկոյ կոչէք»¹³: Սոգութունը, կախարդությունը, դյութանքը ամբողջովին բնորոշ էր և թոնդրակյաններին, ուստի նրանք երբեք չեն նզովել պավլիկյաններին: Իրենց բարոյականության մեջ նրանք հետևում էին ավելի շատ հին հեթանոսներին, քան քրիստոնյաներին: Արևորդիների հերձվածի մասին Պահլավունյաց իշխանը գրում է. «Ահա և այլ ոմանք ի Ջրադաշտ մոգէ՝ մոգապարսկականք, և այժմ ի նոցունց դեղեալ արեգակնապաշտք, զոր Արևորդիսն անուանեն. և ահա են յայդմ գաւառի բազումք և ինքեանք քրիստոնեայք զինքեանքս յայտնապէս կոչեն: Բայց եթէ որպիսի մոլորութեամբ և անառակութեամբ վարին, զիտեմք, զի ոչ ես անտեղեակ»¹⁴:

Նրանց մասին խոսում է՝ որպէս կործանվածների: Նրանց վիճակը գնահատում է որպէս անմխիթար «զազրելի և քստմնելի ախտակրութեան և անքահանայապետ քահանայագործութեան և խաւարչտին ձեռնադրութեան և անշնորհ մկրտութեան» պատճառով: Սմբատի և մյուս աղանդապետերի սուր քննադատությունը բխում է նրանից, որ սրանք խաբում են ժողովրդին և զաղտնի «լուծելոց եպիսկոպոսացն» քայքայում եկեղեցու կառույցը: Նրանք ամբողջապէս չէին մերժում քրիստոնեությունը, «այլ ժխտում էին եկեղեցու բոլոր կարգերը: Չէին ընդունում Քրիստոսին իբրև աստված, աղանդապետն իրեն Քրիստոս էր անվանում: Մերժում էին Ս. Գիրքը, երրորդության գոյությունը, հանդերձալ կյանքը, մեռելների հարությունը, հոգու անմահությունը և այլն», - գրում է Ս. Աբեղյանը¹⁵: Խափանելով քահանայական կարգը, եկեղեցական խորհուրդները (մկրտություն, հաղորդություն, խոստովանություն, ապաշխարություն), պաշտանմունքը, ոչնչացնելով քրիստոնեական խորհրդանիշերը (եկեղեցիներ,

խաչեր, խաչքարեր)՝ լուծում էին անուսնության խորհուրդը և արհամարհելով պասկաղորությունը՝ առաջադրում էին սիրով մերժեցումը՝ հաշվի չառնելով արյան մերձավորությունը: Այսպիսի մի քանի հանգամանքներ և հատկապես երկրորդ կյանքի մերժումը նկատի ունենալով՝ Բ.Սարգիսյանը նրանց ոչնչատեսիլներ է անվանում¹⁶ :

Աղանդի գաղափարաբանությունը իր խորքում, մտածողության իր յուրատեսակ արքետիպերով իսկապես հայկական է: Ընդհանրապես այն գուցե թե մեր նախասկզբնական ակունքներին վերադառնալու ծայրահեղ փորձ-դրսևորում էր: Մագիստրոսը հիշում է, որ աղանդավորների մի մասն էլ իրեն Արամյան գնդից սերված էր համարում: Սա նշանակում է, որ աղանդավորները հրաժարվում էին քրիստոնեության առանձին սկզբունքներից: Այդ ամենի մեջ չի կարելի և չտեսնել Վերածնության այն տարրերը, որ ուսումնասիրողները համեմատում են ռեֆորմացիայի հետ¹⁷:

Թոնդրակեցիների գործելակերպն ունեցել է իր ներքին տրամաբանությունը և գաղտնիքները: Նրանք գործել են ծածուկ: Երբեք բացահայտ չեն հակադրվել եկեղեցականներին: Դա հնարավորություն է տվել չզանազանվել քրիստոնյաներից: Նրանք երբեք չեն հրաժարվել քրիստոնեությունից, այլ իրենց համարել են ուղղադավան: Մյուս կողմից՝ նրանք կեղծ երդումներ էին տալիս, ցուցաբերում ծայրահեղ ծածկանտություն:

Ինչպես ասորիների կաթողիկոսի դեպքում, այնպես էլ Պետրոս Գետադարձին դիմելիս Գր.Մագիստրոսը խնդրում է, որ աղանդավորներին թույլ չտրվի վերադառնալ նախկին բնակության վայրերը, և նրանց նկատմամբ հանդուրժողականություն չդրսևորվի: Այդ նույն թղթում ոմն քահանայապետ Ներսեսի գործունեությունը դատապարտելիս, ով հայիոյանքի խոսքեր է ասել Պետրոսի հասցեին՝ լինելով թերևս ծպտյալ աղանդավոր, իշխանը կրկին քննադատում է թոնդրակյաններին: Նա գրում է. « երկիւղ Տեառն սուրբ և մնայ յավիտեան, և այնու մերժենալ առ Աստուած բարի է..... իսկ որք հեռի արարին զանձինս իւրանց ի Տեառնէ, կորիցեն, սատակեսցին, պակասեսցին ոյք ապստամբք եղեն»¹⁸, քանզի ապստամբ է եղել և սատամա, հայտնվել չարիքի մեջ և դարձել դրա սկզբնապատճառ:

Դատելով ամեն ինչից նկատում ենք, որ թոնդրակյանները ամբողջովին չէին կարող և չեն հրաժարվում աստծո գաղափարից: Սի դեպքում նրանք մերժում են Քրիստոսին, մյուս դեպքում՝ փորձ են անում նոր քրիստոնեության

ստեղծման: Ու թեև շարժումով փորձ էր արվում վերադառնալու նախաքրիստոնեական վիճակին, բայց այն արդեն անհաջող էր. քանզի աղանդը մեծապես ազդված էր նաև քրիստոնեության հիմնարար գաղափարներից:

Իրավիճակին ավելի մոտիկից տեղեկանալու և կամ օգնության համար Մագիստրոսը Յոզիան կաթողիկոսին դիմում է մի խնդրանքով. «Աղէ առաքէ ի գաւառն մեր ի միայնակեացսն սուրբս... Եթէ որպիսի աղետ տարակուսանաց հասոյց դա (Ղազարը-Ս.Մ.) եկեղեցոյ և ահա սակաւ մի յայտնեցից քեզ»¹⁸: Թող միայնակացներ ուղարկի, որպեսզի տեսնեն այն աղետալի վիճակը, որ ստեղծել է «Նեռին կարապետ»-ը: Մյուս կողմից նրանք կքարոզեն ճշմարիտ կրոնը և մարդկանց ճիշտ ուղու վրա կբերեն:

Պարզ է, որ երկրում ստեղծված խառնակ վիճակն է ստիպում Մագիստրոսին լինել անզիջում, գործել առանց հապաղելու: Աղանդավորներին դարձի բերելուց հետո նա աղվեսադրոշմ է դնում աղանդապետերի ճակատներին և հեռացնում իր տիրապետության սահմաններից: Իր ձեռնարկումների մեջ որքան էլ ծայրահեղ՝ Մագիստրոսը ոչ մի դեպքում ֆիզիկական հաշվեհարդար չի տեսնում այդ մոլորյալ մարդկանց հետ: Նորադարձների մասին գրում է. «կանգնեցին ի միջի նոցա աւազան մկրտութեան և արժանի արարին զնոսա եռանձնեան երանաւետ ծայնին դաւանութեան՝ ի բաց դմել նոցա զհին մարդն և զգեցեալ զնոր մարդն»²⁰: Օծումով մեռնում է հին մարդը, և ծնվում է նորը: Ստաժողության այս ձևը ավելի հին ու հեթանոսական է, քան այն, ինչի մեջ Մագիստրոսը մեղադրում էր աղանդավորներին: Ու եթե այդ մասին իմանար, շատ կզարմանար²¹:

11-րդ դարի հեղինակներից միայն Մագիստրոսն է, որ ելնելով իր աշխարհիկ պատկանելիությունից ազատորեն խոսում է աղանդի բոլոր էական յուրահատկությունների մասին և հնարավորություն ստեղծում ապագա հետազոտողին համակարգված մոտեցում ցուցաբերելու դրա նկատմամբ՝ ա/ տալ շարժման կարևորագույն ուղղությունները, բ/ շարժման առաջնորդների ով և ինչպիսին լինելը, գ/ կապը նախորդ աղանդների և կրոնական ուղղությունների հետ²²:

Ծանոթանալով թոնդրակյան աղանդի յուրահատկություններին և երկրում տիրող գաղափարական հակամարտություններին՝ մենք տեսնում ենք, թե ինչպիսի լարված իրավիճակ էր տիրում պատմական Հայաստանի կյանքում 11-րդ դարում:

- ¹ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 150, այսուհետև՝ Թղթեր:
- ² Ս.Մխիթարյան, Գր.Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, էջ 35-40 (Այնուհետև համառոտ):
- ³ Գ.Անանյան, «Միջնորդ Աստուծոյ և ճարդկան», Ժողովրդավարական, պ.Ա,Ե., 1999, էջ 173:
- ⁴ Տե՛ս Թղթեր, էջ 148, 283:
- ⁵ Գ.Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Ե., 1979, էջ 219:
- ⁶ Տե՛ս Ա.Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի, հ.Ա,Ե., 1957, էջ 338: Կան նաև կարծիքներ, որ Ջարեհավանցին սկսել է գործել այդ դարի 70-ական թվականներին:
- ⁷ Տե՛ս Գր.Նարեկացի, Թուրք ամենաշնորհ վարդապետի....., Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 498-502:
- ⁸ Տե՛ս Ա.Հովհաննիսյան, Դրվագներ....., էջ 355-356:
- ⁹ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, Ե., 1963, էջ 41:
- ¹⁰ Տե՛ս К.Юзбашьян, Тондрахидское движение в Армении....., ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, ք.9, Ե., 1956, էջ 31-44:
- ¹¹ Տե՛ս Ս.Մխիթարյան, Գր.Մագիստրոսի կյանքը....., էջ 32-33:
- ¹² Տե՛ս Բ.Սարգիսյան, Սանիքեա-պողիկյան աղանդը և Գր.Մագիստրոսը....., Վեճետիկ, 1892, էջ 45:
- ¹³ Թղթեր, էջ 153:
- ¹⁴ Նույն տեղում, էջ 161:
- ¹⁵ Տե՛ս Ա.Արեղյան, Թոնդրակեցոց աղանդը, Երկեր, հ.Դ, Ե., 1970, էջ 30:
- ¹⁶ Տե՛ս Բ.Սարգիսյան, Սանիքեա-պողիկյան աղանդը....., էջ 41-45:
- ¹⁷ Տե՛ս Ա.Արեղյան, Թոնդրակեցոց աղանդը, էջ 31: Վ.Չալոյան, Հայ փիլիսոփայության պատմություն, Ե., 1975, էջ 306-308:
- ¹⁸ Թղթեր, էջ 27:
- ¹⁹ Նույն տեղում:
- ²⁰ Նույն տեղում, էջ 160:
- ²¹ Տե՛ս Վ.Բղոյան, Հայ ազգագրություն, Ե., 1973, էջ 171-172:
- ²² Տե՛ս Ս.Մխիթարյան, Գր.Մագիստրոսի կյանքը....., էջ 40: